

«Հաստատում էմ»

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի
ռեկտոր՝ Ե.Ս. Սերոբյան

20 մեկնարկարի 2023թ.



Կ Ա Ր Ծ Ի Ք

Ա Ռ Ա Ջ Ա Տ Ա Ր Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ի Թ Յ Ա Ն

Նունե Գագիկի Մովսիսյանի «Ֆիզիկայի հիմնարար սկզբունքները և մեթոդները որպես ավագ դպրոցում սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց» թեմայով ատենախոսական աշխատանքի վերաբերյալ՝ ներկայացված մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար դասիչ ԺԳ.00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկա) մասնագիտությամբ:

Նունե Գագիկի Մովսիսյանի «Ֆիզիկայի հիմնարար սկզբունքները և մեթոդները որպես ավագ դպրոցում սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց» թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ավագ դպրոցի ֆիզիկայի դասընթացում հիմնարար սկզբունքների իրականացման հնարավորությունների վերհանմանը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի առաջին գույրը նվիրված է սովորողների ստեղծագործական մտածողության հիմնահարցերի վերաբերյալ առկա մեթոդական և հոգեբանամանկավարժական գրականության վերլուծությանը: Շեշտադրված է խնդիրների դերն ու նշանակությունը ֆիզիկայի պրոբլեմային ուսուցման գործընթացում: Ատենախոսության երկրորդ գլխում ներկայացված են խնդիրների լուծման տեսության և մեթոդիկայի ընդհանուր հարցերը ավագ դպրոցում: Աշխատանքի երրորդ գլխը նվիրված է հիմնարար սկզբունքների կիրառմամբ ֆիզիկայի դպրոցական խնդիրների լուծումների մշակմանն ու ներկայացմանը: Վերջին չորրորդ գլուխը նվիրված է մանկավարժական գիտափորձին

և դրա արդյունքների ներկայացմանը: Եզրակացությունում ամփոփված են ատենախոսությունում ստացված կարևորագույն արդյունքները:

Ներկայումս առաջնային նշանակություն ունի ուսման նկատմամբ սովորողների մոտիվացիայի բարձրացմանը և ստեղծագործական ունակությունների խթանմանն ուղղված քայլերի մշակումը: Այս իմաստով ատենախոսության թեմատիկան արդիական է և կարևոր: Սույն աշխատանքի նորույթ կարելի է համարել արդեն հայտնի մոտեցումների օգնությամբ լուծվող խնդիրների հետ մեկտեղ հիմնարար սկզբունքների կիրառմամբ որոշ նոր օրինակների մշակումն ու համատեղ ներկայացումը: Ատենախոսության արդյունքների և գիտամեթոդական եզրահանգումների ստույգությունը և իրավացիությունը հավաստիացվում են մանկավարժական գիտափորձի արդյունավետ ելքով և թեմայի շրջանակում հրատարակված թվով ութ գիտամեթոդական հոդվածներով:

Ատենախոսությունն ունի ինչպես տեսական այնպես էլ գործնական կարևոր նշանակություն: Նրա շրջանակում առաջարկված և հիմնավորված է ավագ դպրոցի դասընթացում հիմնարար ֆիզիկական սկզբունքների՝ որպես յուրացման ենթակա օբյեկտների տեսական հետազոտման անհրաժեշտությունը: Կոնկրետ օրինակներով ցույց է տրված այդ սկզբունքների կիրառությունները ավագ դպրոցի ֆիզիկայի ստանդարտ և ոչ ստանդարտ խնդիրների լուծման գործընթացում:

Ատենախոսական աշխատանքն ունի մի շարք արժանիքներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

- Ներկայացված է համագիտական նշանակություն ունեցող շատ կարևոր սկզբունքների (համաչափության, համանմանության, վերադրման և այլն) կիրառումը ուսուցման գործընթացում, ինչը կնպաստի ոչ միայն սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը, այլև մտահորիզոնի լայնացմանն ու ճաշակի ձևավորմանը:
- Ատենախոսությունում ներկայացված խնդիրների օրինակները, որոնք լուծված են հիմնարար սկզբունքների կիրառմամբ գեղեցիկ են և տպավորիչ: Հեղինակին հաջողվել է հավաքել և ընդհանուր կոնտեքստի մեջ ներկայացնել դրանք:

Աշխատանքի նկատմամբ կան որոշ դիտողություն-ցանկություններ:

1) Չնայած նրան, որ ներկայացված մոտեցումները օգտակար են և հետաքրքիր ատենախոսությունում համեմատաբար թույլ է ներկայացված դրանց կիրառությունների հնարավոր ձևերը կոնկրետ տարիքային խմբերի համար: Լավ կլիներ մշակել և ներկայացնել առաջադրանքների պատշաճ քանակությամբ տարբերակներ, հստակ նշելով, թե ո՞ր դասարանների և/կամ սովորողների իսնչ թիրախային խմբերի համար է այն նախատեսված, ի՞նչ տրամաբանությամբ է կազմված և ուսուցման ուժի փուլում է առաջադրվելու: Նման հավելվածը շատ օգտակար կլիներ նաև ավագ դպրոցում ֆիզիկա դասավանդողների համար:

2) Ցանկալի կլիներ, որ աշխատանքում առկա նկարներն ու գծապատկերները ներկայացված լինեին ավելի լավ որակով: Օրինակ, 96 և 125 էջերում բերված գծապատկերները սկանավորված են զրքերից: Նկար 3.3 - ում նույնիսկ մնացել են ռուսական a) և ճ) գրառումները: Կարծում ենք, որ դրանց փոխարեն կարելի էր ներկայացնել լավ որակով ինքնուրույն պատրաստված նկարներ:

3) Էջ 103 - ում [3] հղումը հավանաբար ճիշտ չէ, կամ տեղին չէ: Հազիվ թե մանկավարժության ուսումնական ձեռնարկում խոսվի **ինտեգրալային գումարի հաշվարկի** մասին:

4) Էջ 104 - ի 4-6 տողերում նկարագրվածը չի վերաբերվում նկ. 3.6 - ին, ինչպես գրված է աշխատանքում: Պետք էր նշված լիներ նկ. 3.8 - ը:

5) Դժվար է համաձայնվել այն մտքի հետ, որ լիցքավորված վերջավոր լարի էլեկտրական դաշտի հաշվման ատենախոսությունում ներկայացված մոտեցումը ավելի դյուրին է դարձնում խնդրի լուծման ուսուցումը (էջ 106): Ինտեգրալի շրջանցման եղանակները հետաքրքիր են, սակայն միշտ չէ, որ ավելի հեշտ են ու ընկալելի:

Մեր կողմից արված դիտողությունները, հիմնականում վերաբերվում են թեզի ձևավորմանը և չեն ազդում այն գնահատականի վրա, որին արժանի է աշխատանքն ընդհանրապես: Ատենախոսությունում ստացված են շոշափելի արդյունքներ, որոնք իրենց արժանի գնահատականը ստացել, և որպես մանկավարժական նորույթ հողվածների տեսքով տպագրվել են ԲՈԿ - ի կողմից երաշխավորված մասնագիտական պարբերականներում:

Եզրակացություն - Նկատի ունենալով, որ Նունե Գագիկի Մովսիսյանի ատենախոսական աշխատանքը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, կատարված է պատշաճ գիտական մակարդակով, ունի տեսական ու գործնական նշանակություն և բավարարում է մանկավարժական գիտությունների թեկնածուի (ԺԳ.00.02 դասիչով- «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (ֆիզիկա) մասնագիտությամբ) գիտական աստիճանի հայցման համար ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, ուստի միջնորդում ենք Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գործող գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդի առջև, որպեսզի ատենախոսության հեղինակին շնորհվի մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի 2023 թվականի փետրվարի 20- ի թիվ 10 նիստում:

Քննարկմանը մասնակցել են՝ մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ՊԿ, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Լ.Ս. Մարգարյանը, ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Հ. Մարգարյանը, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Ս. Սողոմյանը, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Վ.Ֆ. Մանուկյանը, մանկ. գիտությունների թեկնածու, դոցենտ Ն. Հարությունյանը, մանկ. գիտությունների թեկնածու Ն. Նազարյանը:

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի ՊԿ, ֆ.մ.գ.թ., դոցենտ՝

Լ.Ս. Մարգարյան

Ամբիոնի վարիչի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝



Կ. Ռ. Պետրոսյան